Փաստաթղթի նախնական դիտում և տպագրում

Այս աշխատանքի ընթացքում նախատեսված է ներմուծել և տպագրել հետևյալ տեքստը.

Մատենադարանի պատմություն

Մատենադարանը հիմնադրվել է 405 թվականին, հայերեն գրերի գյուտից հետո, Հայաստանի հնագույն մայրաքաղաքներից մեկում՝ Վաղարշապատում (Էջմիածին): Հայոց արքա Վռամշապուհի հովանավորությամբ գրչության այս հնագույն կենտրոնից են իրենց լուսավորչական գործունեությունը սկսել ու ծավալել Սուրբ Սահակ Մեծ կաթողիկոսը և հայ գրերի ստեղծող Սուրբ Մեսրոպ Մաշտոցը: Նրանց հիմնադրած Մատենադարանը հարյուրամյակներ շարունակ Հայ Առաքելական եկեղեցու կաթողիկոսարանում եղել է որպես Մայր Գրատուն: Այսօր Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանն աշխարհի հնագույն և հարուստ ձեռագրատներից է: Այստեղ հավաքված շուրջ 17.000 ձեռագիր մատյաններն ընդգրկում են հայ հին և միջնադարյան գիտության ու մշակույթի գրեթե բոլոր բնագավառները՝ գրականություն, պատմություն, աշխարհագրություն, քերականություն, փիլիսոփայություն, իրավունք, բժշկություն, մաթեմատիկա, տիեզերագիտություն, տոմարագիտություն, ալքիմիա-քիմիա, թարգմանական գրականություն, վավերագիտություն, արվեստի պատմություն, մանրանկարչություն, երաժշտություն և այլն:

Քայլ առ քայլ կատարեք հետևյալ գործողությունները.

1. *Word 2007* տեքստային խմբագրիչի միջավայր մտեք:

2. Մկնիկի ցուցիչով ընտրեք *Office* կոճակը: Սեղմեք բացված պատուհանի ստորին մասում տեղակայված *Word Options* կոճակն ու բացված պատուհանի ձախ վահանակից ընտրեք *Advanced* ներդիրը: Բերված պատուհանի *Display* բաժնի *Show measurements in units of* դաշտը բացող ▼ նշանով բերված ցուցակից ընտրեք չափի *Centimeters* միավորը: Ընտրությունն հաստատեք *OK* կոճակով:

3. *Page Layout* ներդիրի *Page Setup* խմբի ստորին աջ անկյունում տեղակայված կոճակով բացվող երկխոսային պատուհանում ընտրեք *Margins* ներդիրը և դրա *Margins* բաժնում սահմանեք լուսանցքների չափերը՝ *Top-2 սմ, Bottom-2 սմ, Left-3 սմ, Right-1 սմ*, իսկ *Orientation* դաշտում՝ տեքստի արտածման երկայնակի (*Portrait*) տեսքը:

4. Ընտրեք *Paper* ներդիրն ու *Paper Size* բաժնում սահմանեք թղթի *A4* չափը: Էջի համար սահմանված պարամետրերը հաստատեք *OK* կոճակով:

5. Մկնիկի ցուցիչը տեղադրեք աշխատանքային տիրույթի որևէ մասում ու սեղմեք աջ սեղմակը: Բացված ենթատեքստային մենյուից ընտրեք *Paragraph* կոճակը, ապա՝ *Indents and Spacing* ներդիրը: Ներդիրի *Alignment* դաշտում սահմանեք պարբերության հավասարեցման *Justify* (ըստ ձախ և աջ եզրերի) տարբերակը, *Indentation* բաժնի *Left* և *Right* դաշտերում ներմուծեք պարբերության աջ և ձախ սահմանները՝ համապատասխանաբար *2 սմ* և *3 սմ*, իսկ *Special* դաշտում՝ առաջին տողի սկիզբը՝ *1 սմ*: Պարբերության համար սահմանված պարամետրերը հաստատեք *OK* կոճակով:

6. Օգտվելով *Alt, Ctrl* և *Shift* ստեղներից՝ ընտրեք հայկական այբուբենը:

7. Ընտրեք *Arial Armenian* տառատեսակն ու դրա *12* չափը:

8. Ներմուծեք վերն առաջարկված տեքստը:

9. Ներմուծված փաստաթուղթը պահպանեք տվյալ դասարանին հատկացված թղթապանակում՝ *Lab_4_** անունով, որտեղ *-ի փոխարեն ներմուծեք աշակերտի դասամատյանի համարը:

10. *Office* կոճակով բերվող մենյուի (*Print*) ենթամենյուի (*Print Preview*) կոճակով բացվող պատուհանում դիտեք տպագրման ենթակա փաստաթղթի հնարավոր տեսքը:

11. Ստանալով ուսուցչի թույլտվությունը՝ (*Print*) գործիքով տպագրեք ստեղծված փաստաթուղթը:

12. Տեքստային խմբագրիչի հետ աշխատանքն ավարտեք՝ օգտվելով պատուհանի փակման կոճակից: